Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2014 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 102 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 21-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբանում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներմուծման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	8	8	8			
Վառելափայտ տրամադրելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ վառելափայտի իրացումը սահմանված կարգով կատարվում է <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի անտառտնտեսության մասնաճյուղերի կողմից:
Վարկ հատկացնելու, ֆինանսական օգնություն տրամադրելու մասին	4	3	2	1		1դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը օգնություն տրամադրելու համար ֆինանսական միջոցների չի տնօրինում:

Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու, տրամադրված երինջների դիմաց վճարման ժամանակացույցում փոփոխություններ կատարելու, խոզամայր և հավ հատկացնելու մասին	6	6	1	5		4 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները կքննարկվեն ՀՀ ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կողմից և արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի: Միաժամանակ առաջարկվել է գործող կարգի համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն իրենց կողմից տնօրինվող անասնաշենքերի և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների վերաբերյալ: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իր ենթակայության ներքո չունի համապատասխան տնտեսություններ խոզամայր տրամադրելու համար: Սակայն, կարող է աջակցել եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջներ կամ տեղական վերարտադրության արդյունքում ստացված տոհմային կենդանիներ ձեռք բերելու գործում: 1դիմումատուի պարզաբանվել է,որ հատկացված տոհմային երինջների դիմաց վճարման ժամանակացույցում փոփոխություններ կատարել հնարավոր չէ,

						անհրաժեշտ է ապահովել վճարման ժամանակացույցով նախատեսված պայմանագրային պարտավորությունների կատարումը:
Անտառային հողատարածք վարձակալության հանձնելու, գույքի օտարման թույլտվություն տալու, գույքի վրայից արգելանքը հանելու, անտառային տարածքներում խոշոր և մանր եղջերավոր անասունների արածեցումը թույլատրելու մասին	16	13	3	9	1	3 դիմում ընթացքի մեջ է: 3 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N806-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ լիազոր մարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքերում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ <<Երկրագործության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին պատկանող հողատարածքները համարվում են արտադրական նշանակության հողատարածքներ, հետևաբար ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը

						դրանց վարձակալության հանձ-նումը գտնում է ոչ նպատակահարմար: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ <<Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլինո 1 հասցեում գտնվող փայտյա տնակները գտնվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվեկշռում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ Անտառային օրենսգրքով անասնապահական նպատակ-ներով անտառօգտագործման տեսակ նախատեսված չէ, իսկ օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն անտառներում խոշոր և մանր եղջերավոր անասունների արածեցումն արգելվում է: 1 դիմում վերահասցեագրվել է Արագածոտնի մարզպետարան, 1 դիմում՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:
Գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումներն ուղարկվել են ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ: ՀՀ

						կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N650-Ն որոշման համաձայն՝ <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամը սահմանված պահանջները բավարարող դիմումատուներին լիզինգային կարգով կտրամադրի գյուղատնտեսական տեխնիկա:
Խմելու և ոռոգման ջրի թերմատակարարման պատճառով կրած վնասը փոխհատուցելու, ջրամատակարարումը կանոնակարգելու, պտղատու ծառերի ոռոգման նորմերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	8	8	2	6		2 դիմում վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե:
Աշխատած տարիների, աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանք և արխիվային փաստաթղթերի պատճեններ տրամադրելու մասին	5	5	4	1		1 դիմումատուի պարզաբանվել է, որ <<Վահանաբերդի սերմնաբուծական տնտեսություն>> ՓԲԸ-ի լուծարումից հետո դրա հիմնական գործունեության վերաբերյալ փաստաթղթերը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն չեն հանձնվել, որի պատճառով հնարավոր չէ աշխատավարձի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ:

Գյուղատնտեսության տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված առաջարկություններ իրակա-նացնելու մասին	6	4		4		2դիմում ընթացքի մեջ է: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց կողմից ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակ-վող ծրագրերում: 1 դիմումատուի առաջարկվել է ներկայացնել ջերմոցային տնտե-սության կազմակերպման ամփոփ ծրագրային առաջարկ: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նախարարությունը պատ-րաստակամ է իր իրավասության շրջանակներում աջակցություն ցուցաբերել կոոպերատիվի հիմնման գործում: Կոոպերատիվը հարմարավետ անասնաշենքով և համապատասխան կերի բազայով ապահովվածության դեպքում դիմումատուն կարող է դիմել նախարարություն տարաժամկետ վճարման պայմանով շվից, սիմենթալ և հոլշտին ցեղերի տոհմային երինջներ ձեռք բերելու համար:

Բնական աղետների հետևանք-ների վերացման նպատակով պետական աջակցություն տրա-մադրելու մասին	8	7		7		1 դիմում ընթացքի մեջ է: 4 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն ՀՀ կառա-վարության 2014 թվականի ապրիլի 10-ի N 532-Ն որոշման՝ ՀՀ մարզերում բնական աղետներից առավել տուժած համայնքներին որպես պետական անհատույց աջակցություն, հատկացվել են ֆինանսական միջոցներ հողի հարկի 100% և ջրի վարձի 50% վարձավճարների փոխհատուցման նպատակով: Վերը նշված որոշմամբ Երևան քաղաքի հողօգտագործողների համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նա-խարարությունը բնական աղետ-ներից տուժած հողօգտագործող-ներին օգնություն ցուցաբերելու համար նախատեսված ֆինան-սական միջոցների չի տնօրինում: Համաձայն ՀՀ կառավարության 10.11.2011թվականի N1582-Ն որոշման՝ արտակարգ իրավի-ճակների հետևանքով ֆիզի-կական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծ-

						վում են հանրապետական, մարզային և համայնքային հանձնաժողովներ, որոնք իրականացնում են վնասների գնահատման գործընթացում իրենց վերապահված լիազորությունները:
Եգիպտացորենի արտադրություն կազմակերպելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ մարզպետարանների կողմից գյուղացիական տնտեսություններից հավաքագրվել է և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել եգիպտացորենի սերմացուի նկատմամբ պահանջարկը, որը 2014 թվականին կազմում է 23.44 տոննա :
Կենդանի ոչխարի և ոչխարի մսի իրացման գործում աջակցելու մասին	2	2	1	1		1 դիմումատուի պարզաբանվել է, որ շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղացիական տնտեսություններն իրենք են կազմակերպում մսի իրացման գործընթացը: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Զորավար համայնքում գործող սպանդանոցը պատրաստակամություն է հայտնել աջակցելու ոչխարի մորթ իրականացնելու գործում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ Սյունիքի մարզում գործում է սպանդանոց և սպանդանոցի կողմից կարող են գնվել ոչխարներ:

Գյուղատնտեսության զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար առանձին գործարարների պարգևատրելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսության աշխատողի օրվա կապակցությամբ նախատեսվում է պարգևատրել ագրովերամշակման ոլորտի և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներին: Պարգևատրվողների ցանկը կազմելիս հաշվի կառնվի «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենին պարգևատրելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը:
Վերամշակող ձեռնարկությանը հանձնված պտղի, խաղողի դիմաց վճարումներն ապահովելու, խաղողի մթերում կազմակերպելու մասին	8	8	6	2		
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	5	5		5		4 դիմումատուի պարզաբանվել է, որ 2007 թվականի ընթացքում համայնքային հանձնաժողովի կողմից աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված խոզերի վերաբերյալ լիազոր մարմնին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ամփոփագիր չի ներկայացվել:ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 84-Ն որոշման համաձայն 2007 թվականի ընթացքում աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասի դիմաց

						սեփականատերերին օժանդակություն է տրամադրվել մարզային հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմնին ներկայացված ամփոփագրի հիման վրա:
Տարաբնույթ հարցեր (ներկրված պոմիդորի սորտերի վերաբերյալ եզրակացություն տրամադրելու, այգու ճառագայթման դեմ միջոցներ ձեռնարկելու, բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի լիցենզիա տալու, միջհամայնքային ճանապարհից մինչև հողամաս սպասարկման գոտու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու, կարտոֆիլի քաղցկեղ հիվանդության դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու, գյուղատնտեսական մթերքների իրացման շուկան կանոնակարգելու, բնական ցեոլիտների արտադրություն կազմակերպելու, գյուղատնտեսական մթերքների իրացման շուկա կազմակերպելու համար իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքը վարձակալության վերցնելու և այլնի մասին)	18	13	1	12		5 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսական մթերքի իրացման նոր տոնավաճառ կազմակերպելու անհրաժեշտության դեպքում նշված տարածքի վերաբերյալ առաջարկությունը կքննարկվի Երևանի քաղաքապետարանի հետ և կկայացվի համապատասխան որոշում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ լիցենզիա ստանալու հայտում բացակայում են ստուգաչափման մասին վկայականները, որոնց առկայությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 03.11.2011թ. N 1632 որոշման 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթի՝ պարտադիր է, բացակայում է նաև հայտատուի էլեկտրոնային ստորագրությունը և առաջարկվել է վերացնել հայտում տեղ գտած թերությունները և փաստաթղթերը ներկայացնել նախարարություն: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ այգու ճառագայթման հարցը

						ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասության շրջանակներից դուրս է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ <<Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին համայնքի պոմիդորի ցանքերում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Պակմար>> սորտի պոմիդորի ցանքերում բույսերի վրա ձևավորված հասուն պտուղների զանգվածը միատարր չէ, որը ոռոգման և սնուցման ռեժիմների խախտման արդյունք է:
ԸՆԴԱՄԵՆԸ	**102**	**90**	**28**	**61**	1	**12 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2014 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբա-նում	Մերժվել է	Ծանոթություն
Պարարտանյութ հատկացնելու մասին	10	10		10		
Սերմացու տրամադրելու մասին	9	9		9		
Դիզելային վառելիք տրամադրելու մասին	12	12		12		
Վառելափայտ հատկացնելու մասին	2	2		2		
Ձկնաբուծական տնտեսություններում ներդրվող փակ և կիսափակ ջրամատակարարման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	3	3	3			
Ոչխարի և տավարի խնամքի ու կերակրման վերաբերյալ մասնա-գիտական խորհրդատվություն տրա-մադրելու մասին	1	1	1			
Մեղվաբուծության զարգացման մասին	1	1		1		
Գյուղատնտեսական կենդանիների բուժման նպատակով դեղամիջոցներ տրամադրելու մասին	10	10		10		
Գյուղատնտեսական տեխնիկա տրա-մադրելու մասին	15	15		15		
Գյուղատնտեսական մթերքների իրաց-ման գործում աջակցություն ցուցաբերելու	7	7	7			

մասին						
Մոսկվայում կայանալիք «Ոսկի աշուն» միջոցառմանը մասնակցելու մասին	1	1	1			
Տոհմային երինջներ հատկացնելու մասին	10	10		10		
Գյուղատնտեսական մթերքներ իրացնելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
Մթերված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումներն ապահովելու մասին	1	1		1		
ԸՆԴԱՄԵՆԸ	**83**	**83**	**12**	**71**		